ТУРИЗМ

Մշակութային ժառանգության ինտեգրումը զբոսաշրջության բուհական ծրագրերում

Սիմոնյան Նարինե Ս.
Զբոսաշրջության և սերվիսի ամբիոնի դասախոս,
Հանրային հաղորդակցության և սերվիսի ֆակուլտետ,
Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան (Երևան, ՀՀ)
https://orcid.org/0009-0009-2502-6753
narinesimonyan1@gmail.com

ՀՏԴ՝ 37.378; **EDN:** LSTOVI
DOI: 10.58587/18292437-2026.5-205
Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ բարձրագույն կրթություն, զբոսաշրջություն, մշակույթ, ժառանգություն, կարողունակություն

Интеграция культурного наследия в вузовские программы по туризму

Симонян Нарине С.
Преподаватель кафедры Туризма и сервиса
Факультет Социальных коммуникаций и сервиса
Государственный университет имени В. Я. Брюсова (Ереван, РА)

Аннотация. Данная статья рассматривает интеграцию культурного наследия в университетские программы по туризму в контексте высшего образования Республики Армения, с учетом таких рисков, как перегруженность объектов наследия, чрезмерная коммерциализация и искажение культурной идентичности, что обуславливает необходимость развития соответствующей компетентности специалистов туристической сферы. Исследование проведено с использованием смешанной методологии, включающей обзор научной литературы и эмпирический опрос. Целевая выборка (n=50) включала специалистов культурных учреждений (n=30) и преподавателей кафедры вуза (n=20). Анкета включала закрытые и открытые вопросы, обработанные методами описательной статистики (пятибалльная шкала Лайкерта) и тематического кодирования; участие респондентов было добровольным и анонимным. Результаты подтверждают значимость знаний о культурном наследии для профессиональной деятельности, отраслевого сотрудничества и сохранения наследия. В теоретических курсах преобладают технологические ограничения, тогда как в практических – недостаточное сотрудничество между университетом и отраслью. На основе результатов предлагается расширить практические занятия и углубить сотрудничество университетов с учреждениями культуры через совместные программы и прикладные исследования, что будет способствовать подготовке специалистов, способных популяризировать и сохранять культурное наследие.
Ключевые слова и словосочетания: высшее образование, туризм, культура, наследие, компетентность

Integrating Cultural Heritage into Tourism Curricula in Higher Education

Simonyan Narine S.
Lecturer, Chair of Tourism and Service, Faculty of Public Communication and Service
Brusov State University (Yerevan, RA)

Abstract. This article examines the integration of cultural heritage into university tourism curricula in Armenian higher education, considering risks such as heritage-site overcrowding, excessive commercialization, and erosion of cultural identity, which underscores the need to develop relevant competence among tourism professionals. The study employed a mixed-methods design combining a literature review with an empirical survey. The purposive sample (n=50) included professionals from relevant cultural institutions (n=30) and university faculty (n=20). The questionnaire included closed and open-ended questions, analyzed through descriptive statistics (five-point Likert scale) and thematic coding; participation was voluntary and anonymous. Findings confirm the significance of cultural heritage knowledge for professional practice, sectoral cooperation, and heritage preservation. Theoretical courses face mainly technological constraints, while practical courses suffer from insufficient university–industry collaboration. Based on these results, the article proposes expanding practical coursework and deepening university–industry cooperation through joint programs and applied field research, helping prepare specialists capable of promoting and preserving cultural heritage.
Keywords and phrases: higher education, tourism, culture, heritage, competence

Մշակութային ժառանգությունը զբոսաշրջային նպատակակետերի մրցունակության բարձրացման առանցքային ռեսուրսներից է: Որպես ազգային ինքնության և պատմական հիշողության կրող՝ այն նպատակակետերին հաղորդում է եզակիություն և աուտենտիկու-

թյուն: Ժառանգության հիման վրա ձևավորվող զբոսաշրջային արդյունքը բնութագրվում է նշանակալի տնտեսական ազդեցությամբ՝ կազմելով զբոսաշրջային հոսքերի էական մասը [**9**; **12**]: Ընդ որում, կապը փոխադարձ է. ժառանգությունը զբոսաշրջային արդյունքի կարևոր բաղադրիչ է, իսկ զբոսաշրջությունը նպաստում է ժառանգության հանրահռչակմանը և պահպանությանը:

Այնուամենայնիվ, զբոսաշրջության ոչ կայուն զարգացումը կարող է բացասաբար ազդել մշակութային ժառանգության վրա. էական ռիսկեր են զբոսաշրջային նպատակակետերի գերբեռնվածությունը, ժառանգության անվերահսկելի առևտրայնացումը և ինքնության աղավաղումը [**3**, էջ 269; **6**, էջ 17]:

Դրանց նվազեցումը պայմանավորված է մի շարք գործոններով՝ մշակութային քաղաքականությամբ [**11**, էջ 3], հասարակության իրազեկվածությամբ, ինչպես նաև ոլորտի մասնագետների մշակութային ժառանգության կառավարման կարողունակությամբ, որի ձևավորումն այս համատեքստում առանձնահատուկ նշանակություն ունի [**10**]: Այդ կարողունակության ձևավորման գործում կարևոր դեր ունի բուհական կրթությունը, ուստի արդիական է զբոսաշրջության բուհական դասընթացներում մշակութային ժառանգության ինտեգրման ուսումնասիրությունը:

Հետազոտության նպատակն է բացահայտել զբոսաշրջության բուհական դասընթացներում մշակութային ժառանգության ինտեգրմանը նպաստող և խոչընդոտող գործոնները՝ ոլորտի մասնագետների ժառանգության կառավարման կարողունակության ձևավորման տեսանկյունից:

Հետազոտության խնդիրներն են՝

- գնահատել մշակութային ժառանգության կառավարման կարողունակության մասնագիտական նշանակությունը դասախոսների և մշակութային հաստատությունների մասնագետների կարծիքով,
- բացահայտել ժառանգության ինտեգրմանը նպաստող և խոչընդոտող գործոններն ըստ դասընթացի տեսակի,
- արդյունքների հիման վրա ձևակերպել խոչընդոտների հաղթահարմանն ուղղված առաջարկներ:

Հետազոտության նորույթն այն է, որ մշակութային ժառանգության ինտեգրման գործոնները զբոսաշրջության բուհական ծրագրերում վերլուծվել են ըստ դասընթացի տեսակի, ինչը թույլ է տալիս համեմատել դրանց առանձնահատկությունները տեսական և գործնական դասընթացներում:

Մեթոդաբանություն

Հետազոտությունն իրականացվել է հարցման եղանակով՝ փակ և բաց հարցերից բաղկացած հարցաթերթով, որի տեսական հիմքը գիտական գրականության վերլուծությունն է: Տվյալները հավաքագրվել են 2026 թ. մարտ–ապրիլին՝ Google Forms հարթակի միջոցով:

Սույն աշխատանքում «տեսական դասընթաց» եզրով նկատի ունենք դասախոսություններով անցկացվող դասընթացները, որոնց նպատակը հայեցակարգային և տեսական հիմքերի յուրացումն է, իսկ «գործնական դասընթաց» եզրով՝ գործնական պարապմունքների, էքսկուրսիաների և դաշտային աշխատանքների միջոցով իրականացվող, կիրառական հմտություններ ձևավորող դասընթացները: «Ինտեգրում» է համարվում մշակութային ժառանգության թեմատիկայի ընդգրկումը դասընթացների բովանդակության մեջ, իսկ «մշակութային ժառանգության կառավարման կարողունակությունը» ժառանգության պահպանության, մեկնաբանման և կառավարման վերաբերյալ գիտելիքների, հմտությունների ու վերաբերմունքի ամբողջությունն է [**10**, էջ 17][1]:

Նպատակային ընտրանքը (n=50) ձևավորվել է երկու խմբից՝ զբոսաշրջային երթուղիներում հաճախ ընդգրկվող մշակութային հաստատությունների մասնագետներից (n=30) և Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի «Զբոսաշրջության և սերվիսի» ամբիոնի դասախոսներից (n=20): Հաստատություններն ընտրվել են ըստ զբոսաշրջային ընկերությունների տվյալների՝ էքսկուրսիոն երթուղիներում դրանց ընդգրկվածության հաճախականության հիման վրա: Մշակութային հաստատությունների մասնագետները ներգրավված են կրթական գործընթացում՝ լինելով հրավիրյալ դասախոսներ տարբեր բուհերում և/կամ կրթական գործառույթի պատասխանատուներ իրենց աշխատավայրում:

Հարցաթերթը ներառել է երեք բլոկ՝ մշակութային ժառանգության կառավարման կարողունակության (գիտելիքների և հմտությունների) մասնագիտական նշանակության գնահատական, կրթական ծրագրերում ինտեգրմանը նպաստող գործոններ և ինտեգրմանը խոչընդոտող գործոններ՝ ըստ դասընթացի տեսակի:

Փակ հարցերի պատասխանները գնահատվել են Լայկերտի հնգաստիճան սանդղակով (4–5՝ կարևոր, 3՝ մասամբ կարևոր, 1–2՝ ոչ կարևոր) և մեկնաբանվել նկարագրական վիճակագրությամբ: Բաց հարցերը վերլուծվել են թեմատիկ կոդավորմամբ: Մասնակիցների ներգրավումն իրականացվել է կամավոր հիմունքներով՝ անանունության ապահովմամբ:

[1] Ծանոթագրություն. *ՅՈՒՆԵՍԿՕ-ի փաստաթղթում ներկայացված են 198 առանձին կարողունակություններ: Հոդվածում «մշակութային ժառանգության կառավարման կարողունակություն» ձևակերպումը գործածվում է եզակի թվով՝ որպես դրանց միասնությամբ ձևավորվող* համալիր մասնագիտական կարողունակություն

Գրականության վերլուծություն

Մշակութային ժառանգությունը՝ նյութական և ոչ նյութական, դիտարկվում է որպես զբոսաշրջային ռեսուրս, տեղական տնտեսության զարգացման գործոն և հավաքական ինքնության կերտող տարր [**1**, էջ 52; **2**, էջ 7; **4**, էջ 102]: Գլոբալացման պայմաններում ժառանգության այս բազմաշերտ բնույթը հատկապես նշանակալի է միջմշակութային փոխըմբռնման և էթնիկ ինքնության պահպանության համատեքստում [**5**, էջ 1710]:

Ժառանգության ընկալումը կախված է զբոսաշրջիկի մշակութային նախասիրություններից և ներգրավվածությունից [**7**, էջ 4]: Ուստի ժառանգությունը մեկնաբանելու և զբոսաշրջային արդյունքի վերածելու կարողությունը դառնում է պահպանության և կայուն կառավարման կարևոր նախադրյալ [**1**, էջ 55; **8**]:

Հարկ է առանձնացնել մասնագիտական այն կարողունակությունը, որն ուղղակիորեն առնչվում է ժառանգության ընկալմանը, մեկնաբանմանը և կառավարմանը: Այն տարբերվում է մշակույթների միջև հաղորդակցության վրա կենտրոնացած միջմշակութային կարողունակությունից և վերաբերում է հենց ժառանգության բովանդակային կողմին: ՅՈՒՆԵՍԿՕ-ի կարողունակությունների շրջանակի համաձայն՝ մշակութային ժառանգության կառավարման կարողունակությունները ներառում են չորս փոխկապակցված խումբ՝ հիմնական (այդ թվում՝ համայնքների ներգրավում, ժառանգության մեկնաբանում, կայուն զարգացում), կառավարչական, անձնային և մասնագիտացված տեխնիկական [**10**, էջեր 12, 29]: Սույն հետազոտությունը հենվում է այդ շրջանակի գիտելիքների և հմտությունների բաղադրիչի վրա:

Ուսումնասիրված աղբյուրներում բավարար ուշադրություն չի դարձվել զբոսաշրջության բուհական ծրագրերում մշակութային ժառանգության ինտեգրմանը նպաստող և խոչընդոտող գործոններին, ինչպես նաև դրանց տարբերություններին՝ ըստ դասընթացի տեսակի:

Արդյունքներ

Հարցման արդյունքները ներկայացվում են երեք թեմատիկ խմբերով՝ կարողունակության մասնագիտական նշանակության գնահատական, ինտեգրմանը նպաստող գործոններ և ինտեգրմանը խոչընդոտող գործոններ: Քանակական տվյալներին զուգահեռ ներկայացվում են նաև բաց հարցերի թեմատիկ վերլուծության արդյունքները: Մասնագետների և դասախոսների պատասխանների միջև տարբերությունները փոքր են՝ հիմնականում մոտ 3, առանձին հարցերում՝ մինչև 5 տոկոսային կետ, ուստի գծապատկերներում ներկայացված են ամբողջ ընտրանքի տվյալները:

Առաջին թեմատիկ խմբի արդյունքները ցույց են տալիս, որ բոլոր հարցվածները մշակութային ժառանգության կառավարման կարողունակությունը գնահատել են որպես մասնագիտական տեսանկյունից կարևոր (Գծապատկեր 1): Ոչ կարևոր գնահատական չի արձանագրվել: Հատկապես բարձր է գնահատվել մասնագետների դերը ժառանգության պահպանության և հանրահռչակման գործում: Հարցվածներն ընդգծել են նաև դասընթացների դերը կարողունակության ձևավորման հարցում:



Գծապատկեր 1. *Մշակութային ժառանգության կառավարման կարողունակության մասնագիտական գնահատականը*

Երկրորդ թեմատիկ խմբում գնահատվել են ինտեգրմանը նպաստող գործոնները (Գծապատկեր 2)։ Մշակութային-կրթական միջոցառումները և հետազոտական գործունեությունը երկու տեսակի դասընթացներում նշվել են գրեթե նույն չափով, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ դրանք կարևոր են անկախ դասընթացի տեսակից։ Էքսկուրսիաները հիշատակվել են երկու տեսակի դասընթացներում, սակայն գործնական դասընթացներում ցուցանիշն ավելի բարձր է։ Քաց պատասխանների համաձայն՝ տեսական դասընթացներում էքսկուրսիան դիտարկվում է որպես տեսական գիտելիքները գործնականում ամրապնդելու միջոց։

Գործնական դասընթացներում առավել բարձր է գնահատվել համագործակցող մշակութային հաստատությունների բազմազանությունը, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ այդ դասընթացներն ավելի սերտորեն են կապված ոլորտային համագործակցության հետ։ Վենց դրանցում են գերակշռում կլոր սեղան քննարկումները, իսկ նախագծային մրցույթները հանդիպում են բացառապես դրանցում։



Գծապատկեր 2. *Ժառանգության ինտեգրմանը նպաստող գործոնները՝ ըստ դասընթացի տեսակի*



Գծապատկեր 3. *Ժառանգության ինտեգրմանը խոչընդոտող գործոնները՝ ըստ դասընթացի տեսակի*

Երրորդ թեմատիկ խումբը վերաբերում է ինտեգրմանը խոչընդոտող գործոններին, որոնք նույնպես տարբերակվել են ըստ դասընթացի տեսակի (Գծապատկեր 3)։ Տեսական դասընթացներում գերակշռել են նյութատեխնիկական սահմանափակումները՝ լսարանների տեխնիկական միջոցներով անբավարար հագեցվածությունը և նորարարական տեխնոլոգիաների սահմանափակ կիրառումը։ Վերջինս նշվել է նաև գործնական դասընթացներում։

Գործնական դասընթացներում, սակայն, գերակշռող խոչընդոտը ինստիտուցիոնալ համագործակցության բացն է՝ բուհի, մշակութային հաստատությունների և տուրօպերատորների թույլ փոխգործակցությունը։ Նշվել են նաև գործնական դասընթացների անբավարար քանակը և էքսկուրսիոն ծրագրերում ընդգրկված սակավաթիվ օբյեկտները։

Այսպիսով, հարցվածները մշակութային ժառանգության կառավարման կարողունակությունը համարել են մասնագիտորեն նշանակալի։ Ինտեգրմանը նպաստող գործոններն ու խոչընդոտները տարբերվել են ըստ դասընթացի տեսակի։

Քննարկում

Հարցվածները մշակութային ժառանգության կառավարման կարողունակությունը գնահատել են որպես մասնագիտորեն կարևոր, թեև ընտրանքի բնույթից ելնելով բարձր գնահատականները կարող են արտացոլել նաև սոցիալական ցանկալիության կողմնակալություն (տե՛ս «Հետազոտության սահմանափակումները»)։

Միաժամանակ արձանագրվել են ժառանգության ինտեգրմանը խոչընդոտող գործոններ, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ կարևորության ընկալումը ձևավորվել է, սակայն դրա ինստիտուցիոնալ ապահովումը, ըստ հարցվածների, դեռևս թույլ է։

Խոչընդոտների բնույթը կախված է դասընթացի տեսակից։ Տեսական դասընթացներում գերակշռում են նյութատեխնիկական խոչընդոտները, որոնք մասամբ կարող են հաղթահարվել ներդրումների միջոցով։ Գործնական դասընթացներում, նյութատեխնիկական խոչընդոտների հետ մեկտեղ, հաճախ նշվել են նաև ինստիտուցիոնալ սահմանափակումները, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ այդ խոչընդոտները փոխկապակցված են։ Դրանց հաղթահարման համար ֆինանսավորումը, ամենայն հավանականությամբ, բավարար չէ. անհրաժեշտ է բուհերի և մշակութային հաստատությունների կայուն համագործակցություն։ Հետևաբար, պահանջվում է համակարգային մոտեցում՝ ըստ դասընթացի տեսակի։

Հետազոտության սահմանափակումները

Արդյունքների մեկնաբանության վրա ազդում են հետևյալ սահմանափակումները՝ ընտրանքի փոքր ծավալը (n=50), նպատակային ընտրանքի կիրառումը և դասախոսների տվյալների հավաքումը միայն մեկ բուհից։ Ընտրանքը ձևավորվել է ժառանգության թեմայով մասնագիտական շահագրգռվածություն ունեցող մասնակիցներից, ուստի բարձր գնահատականները կարող են արտացոլել սոցիալական ցանկալիության կողմնակալություն։ Հետազոտությունն արձանագրել է ընկալումները, այլ ոչ թե կարողունակության փաստացի մակարդակը կամ ինտեգրման իրական աստիճանը, ուստի պատճառահետևանքային եզրակացություններ անել հնարավոր չէ։ Խմբերի փոքր ծավալի հետևանքով վիճակագրական համեմատություն չի կատարվել։ Հետևաբար, արդյունքները պետք է դիտարկել որպես նախնական միտումներ, այլ ոչ թե ընդհանրացվող եզրակացություններ։ Հետագա հետազոտություններում նպատակահարմար է ընդգրկել մի քանի կրթական հաստատությունների ընտրանք և օգտագործել ինտեգրման փաստացի ցուցանիշներ։

Եզրակացություն

Մշակութային ժառանգության մասնագիտական նշանակության բարձր գնահատականը և արձանագրված խոչընդոտները վկայում են ընկալվող կարևորության և դրա ինստիտուցիոնալ ապահովման միջև բացի մասին։ Առաջարկները խմբավորված են ըստ պատասխանատու սուբյեկտների, քանի որ յուրաքանչյուր խոչընդոտի լուծումը պահանջում է տարբեր շահակիցների ներգրավվածություն։ Առաջարկների մի մասը բխում է հարցման արդյունքներից, մյուս մասը՝ հեղինակի մասնագիտական դիտարկումներից։

Բուհերին առաջարկվում է ընդլայնել գործնական բաղադրիչը՝ ավելացնելով էքսկուրսիաների ծավալը, քանի որ հարցվածներն այդ ձևաչափը գնահատել են որպես ինտեգրմանը նպաստող։ Հեղինակի մասնագիտական դիտարկման համաձայն՝ նպատակահարմար է զարգացնել դաշտային աշխատանքները, օրինակ՝ ուսանողների ինքնուրույն աշխատանքը մշակութային օբյեկտներում։ Տեսական դասընթացներում նյութատեխնիկական սահմանափակումների ազդեցությունը կարելի է նվազեցնել բուհերում VR/AR թվային լաբորատորիաների ստեղծմամբ։

Հարցման արդյունքներով ինստիտուցիոնալ համագործակցության բացը ինտեգրման հիմնական խոչընդոտներից է, մասնավորապես՝ մշակութային հաստատությունների և տուրօպերատորների հետ թույլ փոխգործակցությունը։ Ուստի առաջարկվում է բուհերի և մշակութային հաստատությունների միջև, ինչպես նաև պե-

տական մակարդակով կնքել համագործակցության համաձայնագրեր: Պետական մարմինները (ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության կոմիտե) կարող են աջակցել պետական-մասնավոր գործընկերությանը՝ նպատակային ֆինանսավորելով համատեղ նախագծերը:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Timothy, D. J.** Heritage and destination conscience: Empowering communities and enhancing tourism experiences. Pp. 51–63. // In H. Pechlaner, N. Olbrich, & G. Isetti (Eds.), Destination conscience: Seeking meaning and purpose in the travel experience. – Bingley: Emerald Publishing Limited, 2024. https://u.to/4tmVIg
2. **Di Giovine, M. A.** Le heritage-scape: origines, éléments théoriques et examen critique d'un modèle de compréhension du Programme du patrimoine mondial de l'UNESCO. Pp. 1–24. // Via Tourism Review, 2018, No. 13. https://u.to/4dmVIg
3. **Li, Y., Lau, C., & Su, P.** Heritage tourism stakeholder conflict: a case of a world heritage site in China. Pp. 267–287. // Journal of Tourism and Cultural Change, 2020, Vol. 18, No. 3. https://u.to/4NmVIg
4. **Panzera, E., De Graaff, T., & De Groot, H. L.** European cultural heritage and tourism flows: the magnetic role of superstar world heritage sites. Pp. 101–122. // Papers in Regional Science, 2021, Vol. 100, No. 1. https://u.to/39mVIg
5. **Romera, F., Le Bigot, E., & Khoo, C.** Heritage education towards sustainable development in tourism: an inclusive systematic literature review. Pp. 1700–1722. // Tourism Recreation Research, 2024, Vol. 50. https://u.to/hcitIg
6. **Safaa, L., & El Housni, K.** Articuler tourisme et patrimoine: enjeux globaux et résiliences territoriales. Pp. 1–18. // Études caribéennes, 2025, No. 13. https://u.to/3tmVIg
7. **Xu, L., Zhang, J., & Nie, Z.** Role of cultural tendency and involvement in heritage tourism experience. Pp. 1–15. // Land, 2022, Vol. 11, No. 3. https://u.to/3dmVIg
8. **CHARTER** Alliance. CHARTER Skills Strategy & Long-Term Action Plan (D5.3). // European Cultural Heritage Skills Alliance, 2024. – https://u.to/hMOtIg (Մուտք՝ 20.07.2026):
9. **CORDIS.** Conserving culture and cultural heritage through inclusive and sustainable development // European Commission, 2024. – https://u.to/zNmVIg (Մուտք՝ 01.03.2025):
10. **UNESCO.** Competence Framework for Cultural Heritage Management: A Guide to the Essential Skills and Knowledge for Heritage Practitioners. // UNESCO Digital Library, 2021. – https://u.to/k8OtIg (Մուտք՝ 20.07.2026):
11. **UNESCO.** World heritage: Convention for the protection of the world cultural and natural heritage. // unesco.org, 2023. – https://u.to/zdmVIg (Մուտք՝ 11.07.2025):
12. **UNWTO.** World tourism barometer and statistical annex, Vol. 22, No. 1. // unwto.org, 2024. – https://u.to/3NmVIg (Մուտք՝ 25.05.2025):

Сдана/Հանձնվել է՝ 02.10.2026
Рецензирована/Գրախոսվել է՝ 10.10.2026
Принята/Ընդունվել է՝ 16.10.2026